**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ**

Պատվիրատուն՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվելիք գնանշման հարցումների մրցույթների հնարավոր մասնակիցների որոշման նպատակով հայտարարում է նախաորակավորման ընթացակարգ:

Հետաքրքրված համապատասխանող Հայտատուները Հայտերը պետք է ներկայացնեն ստորև նշված հասցեով մինչեւ 2017թ. հունիսի 30-ը ներառյալ: Հայտերը կարող են ներկայացվել էլեկտրոնային տարբերակով՝ info@arspiu.com էլեկտրոնային հասցեով:

**ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

Նախաորակավորման ընթացակարգին մասնակցելու ցանկություն ունեցող մասնակիցը պետք է բավարարի ստորև բերված որակավորման չափանիշներին՝

Ունենա ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված համապատասխան անհրաժեշտ լիցենզիաները, այդ թվում հիդրոտեխնիկական բնագավառում կապիտալ շինարարություն իրականացնելու:

- Ունենա առնվազն **5** տարվա փորձ շինարարության ոլորտում /ներկայացնել իրականացրած պայմանագրերն ըստ տարիների՝ նշելով աշխատանքների նկարագրությունը, ծավալը և Պատվիրատուին, ինչպես նաև կատարված շինարարական աշխատանքների տարածաշրջանը/: Այս պահանջին համապատասխանելու համար, այդ աշխատանքները պետք է ավարտված լինեն առնվազն 70%-ով:

- Ունենա վերջին 3 տարիներից որևիցէ մեկում իրականացված շինարարական աշխատանքների հաջողությամբ պայմանագիր, որի գինը չպետք է պակաս լինի 50.000,0 /հիսուն հազար/ ԱՄՆ դոլարին համարժեք դրամից:

- Ունենա անձնակազմ հիմնական պաշտոնների համար, որոնք են ծրագրի ղեկավար, գլխավոր ինժեներ, աշխղեկ /ներկայացնել կենսագրական թերթիկները/:

- Ունենա աշխատանքների կատարման համար անհրաժեշտ հիմնական սարքավորումները /ներկայացնել ցանկ/:

Վերոշարադրյալի շրջանակում ներկայացվող հասցեն, որին հղում է կատարվում, հետևյալն է.

Տնօրենի տեղակալ
պրն. Արմեն Վանյան

ՀՀ Գյուղատնտեսության նախարարության «Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման գրասենյակ» / ԳԾԻԳ ՊՀ /
Հայաստանի Հանրապետություն,
Երևան 0014, Կոմիտասի փող. 54 Բ, 3-րդ հարկ;
Հեռ. 29 73 01, 29 73 02; ֆաքս 29 73 08;
էլ-փոստ. info@arspiu.com